

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
2016Թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հաշվետու ժամանակում ակադեմիայում իրականացվել են աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

- ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.
- հրշեջ-փրկարարների վերապատրաստում, որակավորման բարձրացում.
- բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.
- բնակչության ուսուցում.
- գիտամեթոդական աշխատանքների կատարում.
- մշակութային դաստիարակության աշխատանքների կատարում
- միջազգային համագործակցություն.
- լրացուցիչ աշխատանքներ:

1. Ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.

2016 թ. ակադեմիայում վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ են անցել 1884 ունկնդիր (պլանով՝ 1830) 87 ուսումնական խմբերում (պլանով՝ 86 խումբ):

Հաշվետու ժամանակաշրջանում՝

- ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից ուսուցում է անցել 546 ունկնդիր.
- ՀՀ մարզերից ուսուցում է անցել 361 ունկնդիր.
- Երևանի քաղաքապետարանից և Երևան քաղաքի վարչական շրջաններից ուսուցում է անցել 977 ունկնդիր:

2. Հրշեջ-փրկարարների վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ.

1. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. դեկտեմբերի 07-ի N 1267-Ա հրամանով հաստատված ՀՀ ՏԿԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ծառայողների 2016թ.-ի վերապատրաստման դասընթացների անցկացման պլան-ժամանակացույցի համաձայն, ակադեմիայի փրկարարական ֆակուլտետում կազմակերպվել և անցկացվել են հետևյալ դասընթացները, առարկայական ստուգարքներն ու քննությունները՝

- ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի ծառայողների մասնակցությամբ, «INSARAG»-ի IEC միջազգային չափորոշիչներին համապատասխան դասընթացներ՝ «Տեխնիկական որոնում» թեմայով (32 ժամ, 15 մասնակից),

- ՀՀ ԱԻՆ ՓԾ ծառայողների մասնակցությամբ, դասընթացներ՝ «Շինարարական կառուցվածքների կայունացման համակարգեր՝ ամրակապում» թեմայով (40 ժամ, 15 մասնակից),
 - ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի ծառայողների մասնակցությամբ, որակավորման դասընթացներ՝ «Բարձրությունների վրա փրկարարական աշխատանքների կազմակերպում՝ պարանային աշխատանք» թեմայով (40 ժամ, 14 մասնակից),
 - ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի ծառայողների մասնակցությամբ, միջազգային չափորոշիչներին համապատասխան դասընթացներ՝ «Վթարափրկարարական տեխնիկական միջոցների կիրառում» թեմայով (40 ժամ, 14 մասնակից),
 - «ՀՀ ԱԻՆ ՓԾ ՀՓՁ-ների հրամանատարների տեղակալների վերապատրաստման» դասընթացներ: Դասընթացներին ընդգրկված են եղել նաև ՌԴ զինված ուժերի 2 հրշեջ ծառայողներ (40 ժամ, 14 մասնակից),
 - «ՀՀ ԱԻՆ ՓԾ ՀՓՁ հերթափոխի պետերի վերապատրաստման» դասընթաց (160 ժամ, 15 մասնակից),
 - ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի ծառայողների մասնակցությամբ, «INSARAG»-ի IEC միջազգային չափորոշիչներին համապատասխան դասընթացներ՝ «Համակողմանի ապահովում» թեմայով (24 ժամ, 15 մասնակից),
 - «ՀՀ ԱԻՆ ՓԾ ՀՓՁ հրշեջ-փրկարարների վերապատրաստման» դասընթաց (240 ժամ, 15 մասնակից),
 - «ՀՀ ԱԻՆ ՓԾ ՀՓՁ հրամանատարների վերապատրաստման» դասընթաց (56 ժամ, 12 մասնակից),
 - ՀՀ ԱԻՆ ՓԾ ջրասուզակ-ջրափրկարարների վերապատրաստման դասընթացներ (120 ժամ, 13 մասնակից),
2. Տեղական արագ արձագանքման ԶՈՓ թիմերի պատրաստում.
- Տավուշի մարզի քաղաքային որոնողափրկարարական թիմի՝ միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափանիշներին համապատասխան ներքին որակավորման նախապատրաստական վարժանք-դասընթաց (47 մասնակից):
 - Տավուշի մարզի քաղաքային որոնողափրկարարական թիմի՝ միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափանիշներին համապատասխան ներքին որակավորման վարժանք-դասընթացի քննություններ (47 մասնակից):
 - ՀՀ Սյունիքի, ՀՀ Տավուշի, ՀՀ Լոռու և ՀՀ Շիրակի մարզերում քաղաքային որոնողափրկարարական թիմերի՝ միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափանիշներին համապատասխան վարժանք-դասընթաց (193 մասնակից):

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի փրկարարական ֆակուլտետում ՓԾ ծառայողների 2016թ.-ի դասընթացների պլան-ժամանակացույցի համաձայն, դասընթացներին, առարկայական ստուգարքներին ու քննություններին

մասնակցել են 429 ՓԾ ծառայողներ, պլան ժամանակացույցով նախատեսված 243-ի փոխարեն:

3. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի համապատասխան հրամանների հաշվետու տարում փրկարարական ֆակուլտետի գործունեության արդյունքում իրականացվել են ՀՀ ԱԻՆ ՓԾ ծառայողների 2016թ.-ի վերապատրաստման դասընթացների անցկացման պլան-ժամանակացույցով չպլանավորված հետևյալ դասընթացները՝

- ՀՀ ոստիկանության զորքերի զինծառայողների «Բարձրությունների վրա պարանային աշխատանքների իրականացում» թեմայով դասընթացներ (40 ժամ, 10 մասնակից):
- Գերմանական Կարմիր Խաչի Բաղեն – Վյուրտեմբերգի երկրամասային դպրոցի հետ համատեղ՝ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի «911» ծառայության կենտրոնական ահազանգման կենտրոնի կրտսեր հրահանգիչներ («911» օպերատորների) և փորձնակների ուսուցում (80 ժամ, 17 մասնակից):
- «Կոկա-կոլա Յելլենիկ Բոթինգ Զամինի Արմենիա» ՓԲԸ աշխատակիցների մասնակցությունը «Հակահրդեհային պատրաստություն» թեմայով դասընթաց (40 ժամ, 5 մասնակից):
- «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի» աշխատակիցների մասնակցությունը «Բարձրությունների վրա փրկարարական աշխատանքների կազմակերպում՝ պարանային աշխատանք» թեմայով դասընթացների տեսական և գործնական պարապմունքներին (40 ժամ, 2 մասնակից):
- ՀՀ ոստիկանության զորքերի զինծառայողների մասնակցությունը «Բարձրությունների վրա պարանային աշխատանքների իրականացում» թեմայով ուսումնական պարապմունքներին (40 ժամ, 11 մասնակից):
- ՀՀ ազգային անվտանգության ծառայողների մասնակցությունը «Բարձրությունների վրա պարանային աշխատանքների իրականացում» թեմայով ուսումնական պարապմունքներին (9 մասնակից):
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ՃԿԱԿ նոր ընդունված անձնակազմի «911» օպերատորների վերապատրաստման դասընթացներ (80 ժամ, 11 մասնակից):

Հաշվետու ժամանակահատվածում ակադեմիայի փրկարարական ֆակուլտետում չպլանավորված դասընթացներին, մասնակցել է 65 ունկնդիր:

Կազմակերպվել և իրականացվել է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությունում ծառայության անցնողների եռամսյա ուսումնական փորձաշրջանի դասընթացներ անցնողների ստուգարքները: 326 մասնակից, որից փորձաշրջանն ավարտել են 155-ը, փորձաշրջանում են գտնվում 144-ը, 27-ը հեռացվել են (29.12.2016թ. դրությամբ):

Ընդհանուր հաշվարկով հաշվետու ժամանակահատվածում ակադեմիայի փրկարարական ֆակուլտետում դասընթացներին, առարկայական ստուգարքներին ու քննություններին մասնակցել են 494

ուևկնդիրներ, ՀՀ ԱԻՆ ՓԾ ծառայողների 2016թ.-ի դասընթացների պլան-ժամանակացույցով նախատեսված 243 ուևկնդիրների փոխարեն և 326 եռամսյա ուսումնական փորձաշրջանի մասնակիցներ (29.12.2016թ. դրությամբ):

Ի կատարումն ՀՀ ԱԻ նախարարի համապատասխան հրամանների ակադեմիայի դասախոսների կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները

- փրկարարական ֆակուլտետի անձնակազմը ներգրավվել է տաքացվող վրանային ժամանակավոր հենակետերի կազմակերպման գործընթացին:
- Ակադեմիայում փրկարարական ֆակուլտետի կողմից կազմակերպվել և անցկացվել է պատանի հրշեջ-փրկարարների մարզումներ և առաջնություն:
- Դասախոսները մասնակցել են փրկարարական ծառայողների ատեստավորման տարածքային հանձնաժողովի աշխատանքներին:
- մասնակցություն «Ուկրաինա-2015» վարժանքների արդյունքների ամփոփման գործընթացին (Սոֆիա):
- Մասնակցություն Շիրակի մարզում նախատեսվող, միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափանիշներին համապատասխան հայ-շվեյցարական համատեղ վարժանքի տեղամասերի նախապատրաստման և սցենարների լրամշակման, ինչպես նաև Շիրակի քաղաքային որոնողափրկարարական թիմի պատրաստվածության ստուգման վարժանք-դասընթացին:
- Մասնակցություն «Երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը և կազմակերպումը» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնական վարժության և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) հետ համատեղ ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) չափորոշիչներին համապատասխան քաղաքային որոնողափրկարարական 5 միջին թիմերի (Երևան, Սյունիք, Տավուշ, Լոռի, Շիրակ) 36-ժամյա վարժանքին:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ծառայողների հերթական ատեստավորման հարցաշարերի կազմում:
- ««100 գաղափար Հայաստանի համար» հանրապետական երիտասարդական մրցույթի կարգը, անվանակարգերը և հայտը հաստատելու մասին» ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանի նախագծի վերաբերյալ առաջարկության ներկայացում:
- «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հանձնարարականի առաջարկության ներկայացում:

3. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.

Ուսանողների թիվը	Բակալավրիատ		Մագիստրատուրա		Միջին մասնագիտական
	առկա	հեռակա	առկա	հեռակա	

Ընդունվել է՝	104, որից 60-ը՝ անվճար	146	–	27	78
Ավարտել է՝ 221	49	124	11	25	37
վերականգնված	10	25	-	1	3
ազատված /ազգային բանակ	20	27	-	-	2
ազատված /այլ պատճառով	12	25	5	5	1
ԸՆԴԱՄԵՆԸ ուսանողների թիվը 14.12.2016 թ. դրությամբ	271, որից 169-ը անվճար	676	-	59	150

Այսպիսով բարձրագույն կրթությամբ ուսանողների թիվը 1006 է, միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորողների թիվը՝ 150-է:

4. Բնակչության ուսուցում.

Բնակչության ուսուցման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- արտակարգ իրավիճակներից պաշտպանության հարցերով ելույթներ զանգվածային լրատվամիջոցներով:
- Վերապատրաստման մասնակցած ՆՈՒՅ-ի, հանրակրթական դպրոցների, ՄՄՈՒՅ-ի, ԲՈՒՅ-երի ներկայացուցիչներին տրվել են ակադեմիայում ստեղծված ուսումնական նյութերի կայքերը:
- Նախադպրոցական կրթական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ներկայացուցիչներին հանձնվել են «Ես կարող եմ», «ԱՌՆ կրթություն. «Թե պատկերն այդ ճանաչես, ինքը քեզ միշտ կփրկես», «Գիտեմ, պատրաստ եմ, կարող եմ...» թվով 241 ձեռնարկ:

5. Գիտամեթոդական աշխատանքների կատարում.

Հաշվետու ժամանակահատվածում

- Հրատարակվել են 37 ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք, 29 գիտական հոդված, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուն, «Ճգնաժամ հաղթահարողներ» ուսանողական թերթը:
- Հրատարակված է պատրաստվել 68 գիտական հոդված (որից 27-ը գրվել է ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից) «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների հրեյանական ժողովածուում հրատարակելու համար:
- Մշակվել են 2 կոնսպեկտ- լեկցիաներ:
- Մշակվել կամ վերամշակվել են 8 դասախոսության կոնսպեկտներ (հիմնականում էլեկտրոնային):

- Կազմվել են վերապատրաստման ուսումնա-մեթոդական պլաններ տարբեր կատեգորիաների համար:
- Կարծիքներ են տրվել 3 տարբեր բնույթի աշխատանքների վերաբերյալ:
- Ղեկավարվել է 36 մագիստրոսական ատենախոսություն:
- Մշակվել են կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր և այլ փաստաթղթեր կրթության զարգացման և որակի ապահովման ուղղությամբ:
- Ներկայացվել են 15 զեկուցումներ միջազգային գիտական, գիտագործնական խորհրդակցություններում և խորհրդաժողովներում:
- Ակադեմիայում ապահովվել է 911 պաշտոնաթերթի կայուն հրատարակումը:

6. Մշակութային դաստիարակության աշխատանքների կատարում.

Հաշվետու տարում մշակութային դաստիարակության աշխատանքների կատարման ուղղությամբ կազմակերպվել են՝

- այցելություն տուն թանգարաններ, մատենադարան և ազգային պատկերասրահ, հանդիպումներ արվեստի, պոեզիայի և այլ ոլորտների ճանաչված ներկայացուցիչների հետ:
- Միջոցառումներ «Ակադեմիա 911» ուսանողական պարի և «Ակադեմիա 911» ստեղծագործական համույթների ներկայացմամբ:
- «Բազե-2016» համահայկական երիտասարդական հավաքին մասնակցություն,
- Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված արշավ դեպի Հատիս լեռ, մասնակցություն թատերական ներկայացումների և կինոդիտում,
- Ակադեմիայի ուսանողները իսկո ապոր գրադարանում խաղացել են աղետների հետ կապված ներկայացումներ և մասնակցել են աղետների թեմայով նկարչական մրցույթի:

7. Միջազգային համագործակցություն.

Ակադեմիան իրականացրել է ուսուցման միջազգային ծրագրեր ՄԱԿ-ի UNDP-ի, unisef-ի, Սեյվ դը Չիլդրեն-ի, Գերմանական կարմիր խաչի շրջանակներում, մասնակցել է մի շարք գիտագործնական սեմինարների Վրաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում:

Save the children-ի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNISEF) ծրագրի շրջանակներում Ակադեմիան մշակել
ծեռնարկ

Փրկարարական ֆակուլտետի անձնակազմը մասնակցել է մի շարք միջոցառումների Հայաստանի Հանրապետությունում:

8. Լրացուցիչ աշխատանքներ.

- ՀՀ բարձրագույն, հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների նախագորակոչային պատրաստության և հայրենասիրական դաստիարակության գործընթացը բարելավելու նպատակով միջգերատեսչական աշխատանքային հաճախողովի աշխատանքներին մասնակցություն:
- Մատաղ սերնդի ֆիզիկադաստիրակչական և հայրենասիրական աշխատանքների իրականացման նպատակով ակադեմիայի ուսանողների հետիոտն արշավների կազմակերպում:
- Պատանի հրշեջ-փրկարարների մարզումներ:
- Մասնակցություն Մոնտենեգրոյում (Չեռնոգորիա) արտակարգ իրավիճակների հետևանքների կառավարմանը նվիրված ՆԱՏՕ-ի գործնական վարժանքին:
- Մասնակցություն ՀՀ Չինված ուժերի հաստիքային հրշեջ խմբի հրշեջ-կիրառական մարզաձևի մրցումներին, որպես կազմակերպիչ, մրցումների գլխավոր խարտուղար և մրցավար:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ գլխավոր, ավագ, միջին և կրտսեր պաշտոնների ՓԾ ծառայողների ատեստավորման հարցաշարերի լրամշակում:
- Ի կատարումն աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ բնակչության ուսուցման հայեցակարգի իրականացման միջոցառումների ծրագրի (ՀՀ Կառավարության 2015թ. ապրիլի 16-ի նիստի N17 արձանագրության որոշման հավելված 2) 4-րդ կետի 1-ին մասի 2015-2016թթ. իրականացվել են նախատեսված բոլոր միջոցառումները:
- Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնող «Շտապ օգնության և աղետների բժշկություն» և «Աղետների բժշկություն» ամբիոնները՝ Ակադեմիայի ուղարկված աղետների ռիսկերի նվազեցման հարցերով 5 ուսումնական նյութերը ներառել են ուսումնական ծրագրերում և ներդրել ուսումնական գործընթացում:
- Դասախոսները մշտապես մասնակցել են քաղաքացիական ծառայողների մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների, ինչպես նաև ԱԻՆ առանձնացված ստորաբաժանումների մասնագետների ատեստավորման հանձնաժողովների նիստերին և ԱՌՆ կրթության հարցերով 4 գիտագործնական սեմինարների, ինչպես նաև ակադեմիայի 2015-2016թթ. ուս.տարվա ամփոփիչ ատեստավորման ավարտական գործընթացին:
- Իրականացվել են հանդիպումներ Երևանի թիվ 82 դպրոցի և բժշկական համալսարանի ավագ դպրոցի աշակերտների ու անձնակազմի հետ, որտեղ քննարկվել են ԱՌՆ հարցեր:
- Կատարվել է ակադեմիայի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով մասնագիտությունների լիցենզիաների վերաձևակերպում:

- ՀՀ ԿԳՆ Է ներկայացվել ակադեմիայի միջին մասնագիտական կրթական ծրագրով մասնագիտությունների լիցենզիայի վերաձևակերպման փաստաթղթերը:
- Որակի ապահովման ազգային կենտրոն Է ներկայացվել համապատասխան փաստաթղթեր ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար:
- Ակադեմիան միջազգային չափանիշներին համահունչ կրթություն տրամադրելու նպատակով մշակել Է համապատասխան փաստաթղթեր (կարգեր, կանոնակարգեր, ուղենիշներ, չափորոշիչներ և այլն):

9. Ուսումնական բազայի բարելավում.

Ուսումնական բազայի բարելավման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Վերանորոգվել Է ք. Ստեփանավանի ուսումնական մասնաշենքի դահլիճը:
- Աշխատանքներ են կատարվել Ակադեմիայի «Լուսակերտ» ուսումնագործնական պարապմունքների բազայում, ավելացվել են գործնական աշխատանքներ կատարելու հնարավորությունները:
- Ձևավորվել են խոչընդոտներ հաղթահարելու համար անհրաժեշտ նոր մոդելներ:

2017 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կառավարման մարմինների և կազմակերպությունների ղեկավար կազմի ու մասնագետների վերապատրաստում՝ շուրջ 1800 ունկնդիր:
- Հրշեջ-փրկարարների վերապատրաստում՝ շուրջ 350 ունկնդիր:
- Շարունակել միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրերի իրականացումն ըստ հաստատված ծրագրերի:
- Ակադեմիայի դասախոսական անձնակազմի կողմից գիտական հոդվածների մշակում և հրատարակում՝ շուրջ 15:
- Զաղաքացիական պաշտպանությունը մարզերում ուսումնական ձեռնարկի մշակում և հրատարակում:
- Ճգնաժամային կառավարում և
գիտամեթոդական հեղվածների ժողովածուների հրատարակում:
- 911 արտակարգ շաբաթաթերթ -ի հրատարակում՝ 46 համար:
- Լուսակերտ բազայում խոչընդոտներ հաղթահարման վարժաիրապարակի կառուցում:

Հարգանքով՝

Ռեկտոր, փ/ծ գեներալ-մայոր

Յ. Մաթևոսյան